ջվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության գինը կազմում է 1407300 / մեկ միլիոն չորս հարյուր յոթ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ, որը որոշվում է ԱՀ կառավարության կողմից սահմանված փոստային առաքանու տեղափոխման սակագների հիման վրա:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ: Դրամական միջոցների վճարումը կատարվում է 3.1 կետով նախատեղված փաստաթղթի երկկողմանի ստորագրված օրինակը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 10 բանկային օրվա ընթացքում:

4.3 Պատվիրատուն ցանկության դեպքում կարող է նաև Կատարողին որոշակի գումար վճարել որպես կանխավճար:

4.4 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 10.01.2022թ-ից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան և ԱՀ օրենսդրությամբ: Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում կիրառվող տույժերի և տուգանքների չափերը չեն կարող պակաս լինել պետական գնումների գործընթացը կարգավորող Հայաստանի Հանրապետության և ԱՀ օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների չափերից: Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե հասցեատիրոջը փոստային առաքանիները չեն առաքվել ոչ ստույգ և /կամ/ ոչ լիարժեք առաքման հասցեի, հասցեի փոփոխության, ինչպես նաև հասցեատիրոջ բացակայության կամ Կատարողից անկախ այլ պատճառով: Փոստային առաքանու վնասվելու կամ կորստի դեպքերում, Պատվիրատուի իրավունքների իրականացումը կատարվում է փոստային կապի ծառայությունները կարգավորող ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2 Պայմանագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա,